

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
վիճակագրության պետական խորհրդի նիստի

13.02.2009թ.

ժ.11: 00

Մասնակցում էին՝

Ս.Մնացականյան (*Խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ.Գևորգյան, Յու.Պողոսյան, Ա.Շաբոյան, Ս.Դավթյան, Ա.Աղազարյան (*Խորհրդի անդամներ*)

Հ. Գրիգորյան (*Խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Լ.Սիրգոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ա. Հայրապետյան (աշխատակազմի ղեկավար), Լ. Խաչատրյան (իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ), Լ. Պետրոսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ), Ա.Սաֆյան (միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ), Հ. Տիտիզյան (ֆինանսների վիճակագրության բաժնի պետ), Լ. Հարությունյան (բիզնես ռեգիստրի բաժնի պետ), Ն.Մուշեղյան (վիճակագրական տեղեկատվության տարածման և մարկետինգի բաժնի պետ), Գ. Մարտիրոսյան (գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ):

Օրակարգի նախագծում` յոթ հարց.

1. «2008 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին» հարցը:

/Ձեկուցող` Ն. Մուշեղյան/

2. «ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի, ըստ ծրագրերի, 2008 թվականի հաշվեկշիռները հաստատելու մասին» հարցը:

/Ձեկուցող` Ա. Հայրապետյան/

3. «Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի հաշվարկման կարգը հաստատելու մասին» հարցը:

/Ձեկուցող` Գ. Մարտիրոսյան/

4. «Հաշվետվություն կազմակերպության ղեբիտորական և կրեդիտորական պարտքերի, բանկային վարկերի և փոխառությունների վերաբերյալ» Ձև թիվ 6-Ֆ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության, դրա լրացման հրահանգի և «Միանվագ հետազոտության հարցաթերթ կազմակերպության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ» Ձև թիվ 3-ՖՀ պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթի և դրա լրացման հրահանգը հաստատելու, ինչպես նաև 2002թ. դեկտեմբերի 2-ի թիվ 262-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Ձեկուցող` Հ. Տիտիզյան/

5. Հաղորդում արտասահմանյան գործողումների հաշվետվությունների մասին.

Հաղորդում Սերբիայի Բելգրադ քաղաքում 12.01.-16.01.2009թ. տեղի ունեցած «Ազգային վիճակագրական գլխավոր ծրագրի մշակում» խորագրով ուսումնական այցելությանը մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող` Ս.Մնացականյան, Գ.Անանյան, Ա.Սաֆյան/

6. «2003թ. մարտի 14-ի «Անհատ ձեռնարկատերերի վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթի (տարեկան)» և «Անհատ ձեռնարկատերերի կողմից բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի տվյալների մատվ ներկայացվող հարցաթերթի լրացման կարգի մասին հրահանգի» թիվ 05-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Ձեկուցող` Լ. Հարությունյան/

7. Այլ հարցեր:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները-կողմ` 7, դեմ` 0, ձեռնպահ` 0/

Լսեցին՝

1. «2008 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին» հարցը:

/Ձեկուցող` Ն. Մուշեղյան/

Որոշեցին՝

հաստատել 2008 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի:

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

2. «ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի, ըստ ծրագրերի, 2008 թվականի հաշվեկշիռները հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա. Հայրապետյան/

Որոշեցին՝

հաստատել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի 2008 թվականի հաշվեկշիռները՝ ըստ ծրագրերի.

1. Պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (01.03.02.01) առ 01.01.09 թ. (հազ.դրամ)

ԱԿՏԻՎ			ՊԱՍԻՎ		
1	Հիմնական միջոցներ	618758.0	1	Ֆինանսավորում	26623.9
2	Նյութեր և պաշարներ	25272.9		այդ թվում՝	25101.7
3	Սակավարժեք և արագամաշ առարկաներ	84645.9		բյուջեից	
4	Ծախքեր արտադրության և այլ նպատակների	-		այլ միջոցներ	
5	Դրամական միջոցներ	1157.1	2	Ֆոնդեր և նպատակային նշանակման միջոցներ	703403.9
6	Հաշվարկներ	2799.6	3	Հաշվարկներ	1448.6
7	Ծախսեր	-	4	Արտադրանքի իրացում և եկամուտներ	1157.1
8	Վնասներ	-	5	Կապիտալ շինարարության ֆինանսավորում	-
9	Կապիտալ շինարարության ծախսեր	-			
ՀԱՇՎԵԿՇԻՌ		732633.5	ՀԱՇՎԵԿՇԻՌ		732633.5

2. Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում (01.03.02.02) առ 01.01.09թ. (հազ.դրամ)

ԱԿՏԻՎ			ՊԱՍԻՎ		
1	Հիմնական միջոցներ	40138.7	1	Ֆինանսավորում	8990.5
2	Նյութեր և պաշարներ	9063.9		այդ թվում՝	8498.1
3	Սակավարժեք և արագամաշ առարկաներ	7686.4		բյուջեից	
4	Ծախքեր արտադրության և այլ նպատակների	-		այլ միջոցներ	
5	Դրամական միջոցներ	-	2	Ֆոնդեր և նպատակային նշանակման միջոցներ	47825.1
6	Հաշվարկներ	506.8	3	Հաշվարկներ	580.2
7	Ծախսեր	-	4	Արտադրանքի իրացում և եկամուտներ	-
8	Վնասներ	-	5	Կապիտալ շինարարության ֆինանսավորում	-
9	Կապիտալ շինարարության ծախսեր	-			
ՀԱՇՎԵԿՇԻՌ		57395.8	ՀԱՇՎԵԿՇԻՌ		57395.8

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. «Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի հաշվարկման կարգը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Գ. Մարտիրոսյան/

Որոշեցին՝

հաստատել Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի հաշվարկման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

4. «Հաշվետվություն կազմակերպության դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, բանկային վարկերի և փոխառությունների վերաբերյալ» Ձև թիվ 6-Ֆ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության, դրա լրացման հրահանգի և «Միանվագ հետազոտության հարցաթերթ կազմակերպության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ» Ձև թիվ 3-ՖՀ պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթի և դրա լրացման հրահանգը հաստատելու, ինչպես նաև 2002թ. դեկտեմբերի 2-ի թիվ 262-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Հ. Տիտիկյան/

Որոշեցին՝

1. հաստատել «Հաշվետվություն կազմակերպության դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, բանկային վարկերի և փոխառությունների վերաբերյալ ձև թիվ 6-Ֆ (եռամսյակային)» պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի դեկտեմբերի 2-ի «Հաշվետվություն կազմակերպության հաշվարկների վերաբերյալ ձև թիվ 6-Ֆ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 262-Ն որոշումը:

3. հաստատել «Միանվագ հետազոտության հարցաթերթ կազմակերպության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ ձև թիվ 3-ՖՀ» պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթը և լրացման հրահանգը՝ համաձայն հավելվածի:

/Նորմատիվ/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

5. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

Հաղորդում Սերբիայի Բելգրադ քաղաքում 12.01.-16.01.2009թ. տեղի ունեցած «Ազգային վիճակագրական գլխավոր ծրագրի մշակում» խորագրով ուսումնական այցելությանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ս.Մնացականյան, Գ.Անանյան, Ա.Սաֆյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին հաղորդումը ընդունել ի գիտություն

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

6. «2003թ. մարտի 14-ի «Անհատ ձեռնարկատերերի վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթի (տարեկան)» և «Անհատ ձեռնարկատերերի կողմից բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի տվյալների մասով ներկայացվող հարցաթերթի լրացման կարգի մասին հրահանգի» թիվ 05-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ. Հարությունյան/

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2003 թվականի մարտի 14-ի «Անհատ ձեռնարկատերերի վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթը» եւ «Անհատ ձեռնարկատերերի կողմից բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի տվյալների մասով ներկայացվող հարցաթերթի լրացման կարգի մասին հրահանգը» հաստատելու մասին թիվ 05-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. որոշմամբ հաստատված «Անհատ ձեռնարկատերերի վիճակագրական քիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթում» և «Անհատ ձեռնարկատերերի կողմից քիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի տվյալների մասով ներկայացվող հարցաթերթի լրացման կարգի մասին հրահանգում» «արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից ստացված հասույթ» նախադասությունը փոխարինել «թողարկված արտադրանքի, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների ծավալ/հասույթ» նախադասությունով՝ համապատասխան հոլովածներով:

/Նորմատիվ/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ